

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի՝
2020 թ. հոկտեմբերի 5-ին նախատեսված նիստը
քվեակազմի բացակայության հիմքով հետաձգելու վերաբերյալ**

ք. Երևան

05.10.2020 թ.

Նիստին մասնակցելու համար ներկայացել էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2020 թ. օգոստոսի 7-ի № 910-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 8-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը նշեց, որ քանի որ նիստի գումարման մասին ծանուցումը Խորհրդի անդամներին ուղարկվել է Արցախում պատերազմի մեկնարկից երկու օր առաջ՝ սեպտեմբերի 25-ին, հրավիրված նիստը հետաձգելու համար իրավական որևէ կարգավորում չկար, հետևաբար նիստի հրավիրումը չի կասեցվել: Նա շնորհակալություն հայտնեց նիստին մասնակցելու համար ներկայացած անձանց և քվեակազմի բացակայության պատճառով հայտարարեց նիստի հետաձգման մասին՝ հիմք ընդունելով Խորհրդի աշխատակարգի 5.1 կետը:

Նա առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց արցախյան ռազմաճակատ մեկնած ԵՊՀ ուսանողներին և դասախոսներին՝ բարի ծառայություն մաղթելով նրանց:

Առաջնորդվելով Խորհրդի աշխատակարգի 5.2 կետով՝ քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվելու է ընդհանուր կարգով: Գ. Մուրադյանը նշեց, որ ստեղծված պայմաններում առաջիկայում նախատեսվելու է առցանց նիստերի հրավիրում:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան